

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱԿԱՅԻ ՊԵՏՐՈՎԻՆ

9/1

ՊԵՏՐՈ

ՇԱՅԱԿՊՐԻ



891.99.5.

7 - 50

30 MAY 2811

“Կ Ա Ր Մ Ի Ր Դ Ի Լ Ե Ր ”-Ի
ԴՐԱԽԱՐԱՆ

№ 1

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ

№ 1

891.994.

Թ-50

329.150.5

ՄԱԳԱԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԵՐ

Պ Ի Ռ Ս Ե Ր Ը
690 V 2

ՀՆԳԱՄԱՎԱԿՈՒՄ

12198

ՊԻՈՆԵՐԸ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

ԱՐՀԵՍՏԱՆՈՅՈՒՄ

Արենաստանոցի գավիթը լցված եր պիոներ-ներով. նրանք թռչկոտում, վազվզում, խաղում ելին կենսուրախ, հրաշունչ վոգեորությամբ:

Հավեց ելեկտրական կոչչակի զիլ ձայնը. պատի մեծ ժամացույցի մուրճը ութ անգամ բարձրացավ ցածրացավ. լսվեց նրա մետաղի բամբ ձայնը:

Սրհեստանոցի դռները բացվեցին, լավեց փու-
կերի ու անիվների շառաչյունը. մի ակնթարթում
արհեստանոցը կենդանացագի. Ահա բերանը լայն
բացած մանգանայի առաջ կանգնած աշխատում
ե պիոներ Մարտինը. Նա, կռները մինչև արմուն-
կը քշտած, մի ձեռքում մուրճը, մյուսում կրտ-
րիչը՝ ուժգին հարվածով տաշում է թունը. ամեն
մի հարվածի հետ բարախում ե նրա սիրտը, ծրգ-
վում են մկանները, վառվում են աչքերն ու իր
հուզ հայացքով ել կարծես կլանում ե իր ձեռա-
կերտը.

Սախելգամի 1-ին տպարան
Պելիանովի փող. № 91:
Գրասեպ № 74:
Գառտիեր 33, Տիկ. 2000:



43196.63



Ահա, իր յերկարությամբ, ձգված ե խառատի դազգյանը. շարժվում են սոնակները, պտտվում են ատամնավոր անիվները: Պիոներ Միտյան գլանակ է չարխում. նա ամբողջ յեռանգով նվիրվել է իր աշխատանքին: Լծակը սեղմած՝ նայում է, թե ինչպես պողպատը շերտ-շերտ, ողակ-ողակ դուրս է սողում կորիչի բերանից, տալով գլանին հարթ ու հղկված ձև:

Ահա լայնաթիկունք, տաշող դազգյանը. նրան զեկավարում է Մարգոն: Դարբնոցից, ձուլարանից բերում են բրոնզի, թուղի, յերկաթի պատվերներ: Մարգոն անցնում է գործի. իր մեքենայով մաքրում, կոկում ու հղկած, պատրաստ աշխատանքը տալիս է ընկերներին:

Լուսիկը կանգնած է մի ուրիշ դազգյանի առաջ, մեքենան արագությամբ պտտվում է: Պիոներները մեկ-մեկ մոտենում, բերում են իրենց աշխատանքները: Հմուտ և լուսիկը, նա զիտե մեքենայի լեզուն, ինքը մեքենայի սիրան է, բոլոր պտուտակները նրա ձեռքումն են. են հսկա մեքենան հլու, հնազանդ կատարում է նրա բոլոր հրամանները:

Յերբ ուզում ե՝ նա տաշում է, յերբ ուզում ե՝ ծակոտում է, հղկում-փայլեցնում:

Արհեստանոցում կյանքը յեռում է. պիոներներները այնքան են տարված աշխատանքով, վոր եղ ժամերին նրանք ձուլվում են ամբողջապես իրենց մեքենաների թափին:

Վարպետը, վոր մի լուրջ, խոհուն կոմյերիտ է, անց ու դարձ և անում արհեստանոցներում, ցուցմունքներ և տալիս պիոներներին. նա մոտենում է լուսիկին և հարցնում է.

— Ինչպե՞ս են գնում զործերդ, լուսիկ:

— Լավ են, բայց մի բան ինձ զարմացնում է: Յերբ իմ փորձ-աշխատանքը մի հասարակ մեխ եր, ինչքան եյի մտածում, թե ինչպես անեմ, վոր լավ ոտացվի: Յերբ պատրաստեցի փայտե կոթով կոկ ու հղկված, փայլուն ձեռամուրճը, այդ գործիքի պատկերը իր բոլոր նրբությամբ մտքից չեր հետանում: Յերբ գեղեցիկ շրջանակի

մեջ մյուս աշխատանքների հետ ցուցադրված եր
նաև իմ մուրճը, ու փոքրիկ պիոններները հավաք-
վում, երձվանքով նայում ելին իրենց ավագ ըն-
կերոջ աշխատանքը, իմ ուրախությանը չափ չկար:
Իսկ այժմ, յերբ այս բարդ մեքենային կարողա-
նում եմ տիրապետել, մի ներքին ճնշում եմ զգում.
Թվում ե ինձ, վոր գեռ վոչինչ չգիտեմ...

— Ճիշտ ե, վորքան շատ ես սովորում, այն-
քան ավելի խորն ես ըմբռնում տեխնիկայի նվա-
ճումները: Շատ ուրախ եմ, քո մեջիսոսում ե յեռան-
դը.... Դու կիրականացնես մեր 5-ամյակի մեծ
պլանը...

Լսվեց կոչնակի ձայնը. աշխատանքը դադա-
րեց: Յեկավ յերկրորդ հերթը: Այժմ ելեկտրոսեխ-
նիկական բաժանմունքն ե գործի անցնում: Պիո-
ներները խոհուն հայացքով անցնում են գործի:

Ահա մի խմբակ, թուլատի ղեկավարությամբ,
ուսումնասիրում ե ելեկտրական լուսավորու-
թյան սխեման: Նա իր ընկերների հետ ամբողջ լար-
վածությամբ աշխատում ե. մետաղե լարերը հյու-
սում ե իրար, մի տեղ ամրացրել ե նախազգու-
շակը, մի այլ տեղ արձակիչը, պատրոնները իրենց
լամպաներով. այժմ մնում ե կցել ելեկտրական
հոսանքին, բայց նա առանց վարպետի չի վատա-
հանում:

— Ընկեր վարպետ, կարելի յե՞ փորձել,

— Կարելի յե, յեթե ամեն ինչ կանոնավոր
ե պատրաստված:

Վարպետը մոտենում ե, մի առ մի սկսում ե
բացարեր Պիոններները հավաքվում, լարված ու-
շադրությամբ լսում են նրա բոլոր ցուցմունքներն
ու զրի յեն առնում իրենց բլոկ-նոտներում:

— Այս կետը սխալ ե միացրած, — նկատում ե
մի պիոններ:

— Վոչ, կանոնավոր ե, — առարկում ե մի
ուրիշը. — Նրանք բաժանվում են յերկու խմբի:

Տատանման մեջ ե և ինքը՝ Բուլատը. նայում
ե մերթ վարպետին, մերթ պիոններներին:

— Ի՞նչ եք մտածում, ընկ. Բուլատ, — դառնուս
ե նրան վարպետը, — Ճիշտ ե միացրած, թե՞ վոչ:

Բուլատը լարված ուշադրությամբ զննում ե իր
աշխատանքը: Ապա վատահ ու համարձակ ասում ե-

— Այո, ուղիղ ե:

Բոլորի հայացքն ընկնում ե վարպետին, բայց
սա լուռ ե:

— Միացնեմ, — նորից դառնում ե թուլատը
վարպետին:

Վարպետը գլխով դրական շարժում ե անում: Պիոններների յերկու խմբակը լարվածությամբ
հետևում ե թուլատին: Սա թելերի յերկու ծայ-
րերը ինամքով միացնում ե: Արձակիչը ձեռքում

ամուր սեղմած՝ մի վայրկյան կանք եւ առնում,
ապա ջղային ցնցումով միացնում եւ հոսանքին..

— Թը՛ շշ. — լսվում եւ մի խուլ ձայն նույն
վայրկյանին փայփում եւ մի թույլ կայծ...

Բուլատն ամբողջ մարմառվ դժողում եւ յերեսը
պատել եւ քրտինքով նա ճակատը սրբում ու ահ-
համարձակ նայում եւ վարպետին:

— Վոչինչ, — ձեռքը գնելով Բուլատի ուսին՝
հանգստացնում եւ վարպետը:

— Յես դիտմամբ թույլ տվի միացնել, վորպես-
զի ձեզ համար պարզ լինի, վոր ելեկտրականու-
թյունը պահանջում եւ վերին աստիճանի ճշտու-
թյուն, նա ունի իր վորոշ որենքները, վորոնցից
մազաշափ անգամ չի կարելի շեղվել: Սա
թող լավ դաս լինի ձեզ բոլորիդ համար...
Վոչինչ, այրվեց մի «նախազգուշակ», այժմ թող
Բուլատը իր սխալը ուղղի և սենք նորից վոր-
ձենք:

— Յես իմ սխալը գտա և ուղղեցի, — քրտինքը
սրբելով ասաց Բուլատը, վոր այդ միջոցին լար-
ված աշխատում եր:

Վարպետը խորազննին նայեց, ապա ասաց.
— Միացրու:

Բուլատը հոսանքը միացրեց. մի ակնթար-
թում բոլոր կետերում յերկացին ելեկտրական
լույսեր....

Պիոներների աչքերը փայլեցին. նրանց հըրձ-
վանքին չափ չկար:

— Տեսաք, մի փոքր սխալը ինչ հետեանքների
կարող եւ հասցնել. — ասաց վարպետը և անցավ
ելեկտրոմոտորի մոտ, ուր աշխատում էյին մի
խումբ հմուտ պիոներ՝ Հրանտը, Հոփիսիկն ու
Շողիկը:

— Ինչպես եւ գնում ձեր գործը, Հրանտ, — ասավ
վարպետը:

— Բոլոր մասերը հավաքել ավարտել ենք.
սպասում եյինք ձեզ, — խոսեց Հրանտը:

— Շողեր, գու ի՞նչ կասես, ամեն ինչ կար-
գին եւ:

— Այս, վարպետ, — տատանվելով պատասխա-
նեց նա:

— Ապա մի անգամ ել լավ նայեցեք, սխալ
հո չկա... .

Յերեք ընկերն ել անցան գործի. մանբազըն-
նին քննեցին, բայց բան չգտան:

Հոփիսիկն ու Շողերը լարված գրության մեջ
եյին, բայց Հրանտը ինքնավատահ կանգնած եր
մի կողմը:

— Լավ նայեցեք. — խիստ տոնով գոչեց վար-
պետը: Նրանք նորից գործի անցան:


— Յես գտա. եստեղ սխալ եւ միացրած, — գո-
չեց Հոփիսիկն ու իր պայծառ աչքերը հառեց
վարպետի վրա:

— Բացի՞ այդ՝ մի ուրիշ սխալ ել կա, թող
դա յել գոնի Հեղուշը կամ Հրանտը...

Հրանտի գույնը թռել եր, Հեղուշը սրանեղվել.
մենակ Հոփիսիկն եր, վոր աշխուժով աշխա-
տում եր:

— Ի հարկե սխալ ե, —ուշի-ուշով զննելուց հե-
տո խոսեց Հոփիսիկը: — Յեթե ես դրությամբ բանի
գցելինք, մոտորը կայրվեր:

Նայեց նա վարպետին ու սխալն իսկույն ուղղեց:
— Միացրեք հոսանքը, — այս ու այն կողմից
խոսեցին պիոներները:



— Սպասեցեք, գործի գցելը դժվար չե. — խո-
սեց վարպետը. — սա լուսավորության սխեման չի,
վոր մի նախաղգուշակով պրծնենք. այստեղ ամ-
բողջ մոտորն ե վտանգի մեջ. թույլ տվեք մի
յես ել նայեմ:

Վարպետն ուշի-ուշով, մի առ մի շոշափեց,
զննեց բոլոր մասերը, ապա հանգիստ շունչ քա-
շելով, ասաց.

— Հոփիսիկ, մոտորը գործի գցի՛:

Հոփիսիկի դեմքին խաղաց գոհունակության
ժպիտ. նայեց վարպետին, արձակիչը միացրեց:

— «Վը զ' զ'»... — լսվեց մեղմ շառաչյուն. մո-
տորը մեծ թափով սկսեց պտտվել...

Պիոներները հիացմունքով նայում եյին, թե
ինչպես քիչ առաջ համը ու մունջ մեքենան այժմ
կենդանացել, ուժգին թափով աշխատում եր:

Ինչ մեծ ուժ ե դա, ինչ հոկայական եներգիա
կա ելեկարականության մեջ:

Վարպետը պատմում եր ելեկտրական հոսան-
քի մասին, լավ ու վատ հազորդիչների, դրական,
բացասական բևեռների մասին:

— Ինչպես իմանանք, թե վրբն ե դրականը,
վնրը բացասականը, — հարցրեց Հրանտը:

— Դա շատ հեշտ ե, — ասաց վարպետը. — դրա
համար կա հատուկ պատրաստված քիմիական
թուղթ. դրական հոսանքն այդ թղթի վրա թող-

նում ե կարմիր հետք, իսկ բացասականը վոչ մի հետք չի թողնում: Ահա, նայեցեք. շարժում եմ. այդ թղթի վրա մի հոսանք. փորն ե:

— Դրականը, դրականը. — գոչեցին եսու են կողմից:

— Այժմ մյուս հոսանքը տեսնում էք, վոչ մի հետք: Այսպիսով իմանում ենք դրական ու բացասական հոսանքները: Ինչ վոր գուք սովորում եք ուսումնարաններում թեորետիկորեն, հարկա վոր ե գիտենալ նաև գործնականում: Մեկը լրացնում ե մյուսին: Առանց գործնականի դժվար ե ըմբռնել թեորիան: Ահա թե ինչու գուք պետք ե լավ յուրացնեք թե մեկը և թե մյուսը:

Պիոներները խմբովին անցան աղդանշանի, ապա ելեկտրոզանդի, հեռախոսի, «սեմաֆորի» բաժանմունքները:

Մի տեղ զողանջում եր ելեկտրոզանդը, մի այլ տեղ լսվում եր հեռախոսի մոնուոն զրույցը:

— Ապա, Բուլատ, Հրանտ, Շողեր, գործի անցեք. սկսեք ստուգել սրանց աշխատանքները:

— Յես իմ զանգն անց եմ կացրել յերեք սենյակ, ամեն մի սենյակն ունի իր կոճակը. մեկը նուշաբանում, մյուսն առանձնասենյակում, յերրոդն ել խոհանոցում:

— Ահա և իմ կազմած սխեման, — չարաճճի հարացքով դիմեց վարպետին 13 տարեկան Զիգին:

Վարպետն ուշի-ուշով քննեց թե նրա սխեման և թե աշխատանքը:

— Սխեմայ ճիշտ ե, բայց աշխատանքդ թափ-թրփած. յերեսում ե շտապել ես:

— Դժվար ե, ընկեր վարպետ. — Կես գժղոհ, կես սրտնեղած խնաեց Զիգին:

— Դժվարի ու հեշտի խնդիր չե, սիրելիս. քո աշխատանքի մեջ մաքրություն, սրբություն չեմ տեսնում:

— Ի՞նչ ե, մյուսները լավ են. — Վրդովված խոսեց Զիգին:

— Մենակ քեզ չեմ ասում. սա մի ցավալի յերեսյթ ե մի շարք ընկերների մեջ. շտապում են, զործը վչացնում ու ավարտում են կիսատպատա... նախազգուշացնում եմ, վոր սրանից հետո խստապահանջ կլինեմ:

— Յես իմ հեռախոսը միացրել եմ մեր ուսումնարանի հետ. սա յել իմ սխեման ե. — Խոսեց կայտառ, կարմրաթուշ Արփիկը:

— Յես սիմաֆորի լարերն անց եմ կացրել Ավճակա կայարանում. սա յել իմ սխեման ե. — Կուրծքը դուրս գցած խսնեց պիոներ Վազգենը ու իր կրակոտ աչքերը հառեց վարպետին:

Վարպետը յերկուսի աշխատանքն ել գովեց ու անցան վերջին բաժանմունքը, ուր աշխատում

եյին մի քանի խմբակ։ Դեռ հեռվից լսվեց հեռագրի շխչոցի ձայնը։

— Յես Մոսկվայի հետ եմ միացրել իմ հեռազրի ցանցը, — խոսեց կապուտաչյա Հրանտը։

Եղ բաժանմունքում վոչ մի պակասություն չդուակ վարպետը, բոլորն ուրաքս եյին։

Հնչեց աշխատանքի վերջանալու դողանջը։

Դ Ե Պ Ի Լ Ա Գ Ե Ր

Ամառային արձակուրդը մոտենում եր, Պիոներները մեծ մասամբ ավարտել եյին աշխատանքներն, այժմ պատրաստվում եյին ցուցադրելու իրենց նվաճումները, փորից հետո լագեր դնալու պատրաստություններ պիտի տեսնեյին։

Պիոներներն անհամբեր սպասում եյին, թէ յերբ պետք է գա լագեր մեկնելու ժամը, և հին լագերայիններին հարց ու փորձ եյին անում, թէ փորտեղ և լագերը և ի՞նչ կա ենտեղ։

— Լավ, ի՞նչ կինի, փոր ասես, — անհանգիստ հարցնում եր Զիղին։

— Ենտեղ գետ կա լողանալու...

— Գետ ել կա, աղբյուր ել...

— Իսկ ծաղիկներ։

— Ծաղիկների մեջ կկորչես։

— Անտառ։

— Այնպիսի հսկայական անտառներ կան։

— Ա՛հ, յերբ պետք ե ես յերկույթերեք որն ել անցնի, — մտածում եյին պիոներները։

— Դե բավական ե. հունիսի 1-ին, վաղ առավոտյան կլինեք կոլեկտիվում, — վերջապես ասաց կողմաբը։

— Գիտենք, արդեն գիտենք, — աղաղակեցին պիոներներն ու շտապ գնացին պատրաստություններ տեսնելու։

Վերջի յերեկոյան նրանք արդեն ամեն ինչ կապկապեր, պատրաստել եյին ու իրենք ել շատ շուտով տեղերն եյին մտել։ Բայց աշքերին քունը մոտ չեր գալիս։ Նրանց յերազանքը լագերն եր, հաղար ու մի մոտավատկերներ եյին ստեղծում իրենց յերեակալության մեջ ու ժամերով ապրում դրանով։ Լուսն ու մուլթը գեռ չզատված՝ նրանք արդեն փոքրի վրա եյին։

Պիոներները լուրջ, մտազբաղ ու խոհուն անցնում եյին քաղաքի մեծ փողոցներից։

Դեռ շատ հեռվից լսվեց կայարանի աղմուկը, շողեմեքենայի սուլոցը, անիվների դղբջունը, պիոներների խառնիճաղանչ աղաղակը.....

— Հեյ.... Հոփիսիկ, Շողեր, Բուլատ, Ահմեդ, Մարգո, Ճեր կոլեկտիվն ել յեկավ, — գոռում եյին այս ու այս կողմից պիոներները։

Նրանց գուլալ, արծաթի ձայնը լցվել եր կայա-
րանը:

— Ահա և վարպետն ու բժիշկն...

— Ուռաաաա...—գոռացին պիոներները:

Գնացքը դղրդյունով յեկավ, թշաց ու կանգ
առավ: Հինգ վագոն առանձնապես հատկացված
եր նրանց: Պիոներներն իրար անցան:

— Կանգնե՛լ շարք-շարք, — լսվեց կորվարի
ձայնը:

Մի պահ աղմուկը դադարեց: Զույզ-զույզ
կանգնեցին ու սպասում եյին:

— Բարձրացեք վագոն.—կարգադրեց կոր-
վարը:

— Հանդարտ, հանդարտ...— լսվեց նույն
ձայնը:

Նորից աղմուկ ու ժխոր. իրար գլխի վրա
լցվում են վագոնները, գլուխները հանում են
լուսամուտներից ու ցնծագին աղաղակում.

— Մուգիկա, մուգիկա...—փողային յերաժշշ-
տությունը նվազում ե մարշ:

Լսվում ե զանգի ձայնը...

Հնչում ե սուլիչը...

— Փու՛, հա փու՛... փու՛, հա փու՛... —
դղրդում ե մեքենան. գնացքը հեր-հեր շարժվում
է առաջ:

Աղմուկը, քրքիջը, գոռում-գոչյունը, բացական-
չությունները խառնվում են շոգեմեքենայի վո-
րոտին. գնացքը սլանում ե:

— Սա մեր Քուռ գետն ե՝ իր վոլորապտույտ
ավերով.—ասում ե Մարգոն:

— Սա մեր քաղաքի ջրմուղն ե. ահա և Ավ-
ճալա կայարանը:

Գնացքը մի բոպե կանգ ե առնում ու նորից
սլանում: Պիոներների ուշքն ու միտքն այժմ
գրավում ե Զագեսը. շատ են լսել եղ անունը,
շատ են տեսել պատկերներում:


Այժմ պետք ե անցնեն Զագեսի մոտով:

Դեռ հեռվից յերկում ե Լենինի բրոնզե մե-
ծառիք արձանը: Նրանք այլևս գոշինչ չեն տես-
նում. նայում են այդ գեմքին ու այդ հայացքն
ամեն ինչ ասում ե նրանց...

Վոչ վրփահույզ ջրվեժը, վոչ Զագեսի ծով
ամբարտակը, վոչ հսկա մեքենաները, վոչ ելեկ-
տրական լուսավորության ցանցը—նրանց մտա-
պատկերներում տեղ չեն գտնում....

Մենակ Լենինի այդ բրոնզե արձանն ե, վոր
մեխիվել ե նրանց քնքույշ ու մատադ սրտերում:

— Մարգո, ինչո՞ւ գնացքը չկանգնեց. — Հարց-
նում ե Արփոն ու ախոնտ-տխուր նայում է ըն-
կերուհուն:



Ամբողջ ճանապարհը պատած է լեռներով ու գեղանի տեսարաններով:

Ահա հեռվից յերեաց սպիտակ կայարանը. որը ճաշ է դառել. արեց թեքվել-անցել և սարերի հետեւ. Գնացքը յերկար սուրեց ու կանգ առավ:

— Հանդարս իջեք.—կարգադրեց զեկավարը:

Պիոներներն առանց աղմուկի իջան վագոններից:

Գնացքն ամպի նման քուլաներ անձակեց, զիւ ճչաց ու շարժվեց առաջ:

Պիոներներն յերկար նայում եյին հեռացող գնացքին, մինչև նա կթագնվեր բլրակի հետեւ...

— Շարք-շարք,—լսվեց լագերի զեկավարի ձայնը:

Աղմուկը դադարեց. պիոներները շարք-շարք շարժվեցին գեպի լագեր:

Ամեն մի ծառ, ամեն մի թուփ ու ծաղիկ նորություն եր նրանց համար:

Ճածը մեղմ զողանջով անցնում եր գետը. դիմացը՝ անտառի ծոցում՝ սարալանջին փոված եյին սպիտակ վրաններ. վրանների գլխին ծածանվում եր կարմիր դրոշակի թիկունքում բարձր լեռներ, վորոնց գագաթներին տեղ-տեղ սպիտակին եյին տալիս դեռ չհալված, արծաթափայլ ձյունի շերտեր:

Ահա ճանապարհի յեզրին, փոքրիկ ձորակում, քչքչում են սառնորակ աղբյուրները. ժայռի կուրծ-

քը ճեղքել, յեռալով ու փրփրալով դուրս են ժայթքել հակինթ ջրեր, հստակ ու զուլալ:

Պիոներներն ամեն ինչ մոռացած նետվեցին ջրերի մեջ:

Ահ, ինչ հրաշալի տեսարան եր դա...

— Շարք-պատրամտ:

— Բավական ե, բավական ե,—դառնում ե զեկավարը պիոներներին....

Ահա և սպիտակ վրանը, նըա առաջ շքեղ ծաղկագարդ հրապարակ, ուր կանգնած ե բարձր, վիթխարի կայմը. կայմի զլիսին ծածանվում ե կարմիր դրոշ....

Պիոներները խոհուն դեմքով կանգնած սպասում են զեկավարին:

— Ուոանան, —միաձայն գոռում են պիոներները:

Մուզիկան նվագում ե «մարշ»:

Մի փոքր հանգստանալուց հետո՝ զեկավարը տալիս ե հրահանգներ ու անհրաժեշտ ցուցմունքներ:

Մուզիկայի նվագի տակ, հաղթ քայլերով, պիոներները ցրվում են իրենց հստկացված վրանները:

— Ինչ լավ ե կյանքը լագերում. — ցնծագին աղաղակում ե Հեղուշը:

— Ինչ լավ ե այստեղ... — հիացած բացականչում ե Նվարդը:

— Տեսեք, մեր վրանների մեջ ծաղիկներ են բուսել — ուրախ ու կայտառ աղաղակում ե Հոփիսիկը:

Պիոներները տեղավորվում են վրաններում, բաց են անում իրենց կապոցները, դասավորում են գրքերը, տետրակները, պատերը զարդարում են նկարներով ու հրճվանքով նայում իրենց նոր անկյուններին...

Մի քանիսը սկսում են թոշկոտալ վրանների շուրջը, մյուսները ծաղիկներ են փնջում, վազում են աղբյուր, ջուր են բերում, վազում են անտառ՝ փայտ հավաքելու:

Զարաձճի Զիգին արդեն բարձրացել է ծառի կատարն ու գոռում ե.

— Սրփո, Մարգո, Հեղուշ... ահսեք՝ ուր եմ բարձրացել յես...

— Մենք ել, մենք ել, — գոռում են այս ու այն կողմից ու իրանք ել բարձրանում են մյուս ծառերը:

— Տնւ... տնւ... տնւ... տնւ... — լսվում ե ազդանշանը. կանչում են ճաշի:

Ահա և մեծ, ընդարձակ սեղանատունը, վորք տեղավորված է ծածկի տակ:

Ամենքը բռնում են իրանց տեղը:

— Իմ որումն եռպես համեղ չեմ ճաշել, — աթունքները լսված լով խոսում ե կուսիկը:

— Կարկանդակներն ենքան փխրուն ելին, վորքերանիս մեջ հալվում ելին. — խոսում ե Զիգին:

— Յես ենպես քաղցած ելի, վոր կարծում ելի չեմ կշտանալ, բայց խոհարարն ենքան. մեծ բաժին եր տվել, վոր հազիկ կարողացա վերջացնել, — խոսում ե Արփոն...

Յերեկոն վրա հասավ: Յերկինքի աստղազարդ եր. վչում եր մեղմ գովը, խշում ելին ծառերի տերեները, յերբեմն ել անտառի խորքից լսվում եր վայրի թոշունների խորհրդավոր կանչը...

Գիշերվա խավարի մեջ սքանչելի յեր վրանների տեսարանը: Ելեկտրական լամպաների լույսը, աստղերի նման, հուրիստին ելին տալիս այս ու այն կողմը:

Պիոներները, խումբ-խումբ հավաքված վրանների առաջ, որքա գունեղ տպավորությունների տակ, ասում, խոսում, զրուցում ելին:

— Տնւ... տնւ... տնւ... տնւ... — լսվեց շեփորի հնջունը: Եռյին սեղանատանը պատրաստված եր ընթրիքի սեղանը:

Սպասարկում եյին իրանք՝ պիտներները. այժմ
նրանք արդեն ընտելացել են, գիտեն խոհանոցի
տեղը, ճանաչում են խոհարարներին:

Ընթրիքը վերջանում ե. գնում են նորից
փրանները, պատրաստում են տեղերը՝ քնելու:

Որվա մտապատկերները շարան-շարան գալիս
ալեկոծում են նրանց միտքը, հուզում նրանց
սիրալ, բայց հոգնածությունն իրանն անում ե,
թերթերունքները ծանրանում են, աչքերը փակ-
վում:

Վաղ առավոտից վեր են թռչում տեղերից.
սկսվում ե լագերի առաջին որվա աշխատանք-
ները, պիոներներն անցնում են մարզանքի:

Կայմի գագաթն ե բարձրանում կարմիր դրոշը:
Ահա և լագերի ղեկավարը:

— Պատրաստ... — կանչում ե նա:
— Միշտ պատրաստ... — աղաղակում են պիո-
ներներն ու կանգնում շարքային գծով:

Հերթապահը կարդում ե որվա աշխատանքի
ծրագիրը: Դեմքերը լուրջ, պատրաստ՝ իրադոր-
ծելու որվա բոլոր պատվերները, ուշի-ուշով լսում
են նրանք:

Առավոտվա թեյից հետո ցրվում են վրան-
ների շուրջը, մաքրում, ավելում են ճանապարհ-
ները, քաղնան են անում ծաղկանոցները, կար-
գի յեն բերում սեղանատունը: Ապա անցնելով

վրաններին՝ անձրեսի ջրերի համար ջրանցքներ են
փորում, ամրացնում են վրանի պարանները: Այժմ
մոտենում ե նրանց ամենասիրելի ժամը, վորին
սրտատրով սպասում են. դա գետում լողանալն
ե և արևի վաննաներ ընդունելը...

Արևը բավականին բարձրացել եր, գետը փոք-
րիկ ալիքներով հանգիստ հոսում եր նրանց
առաջից:

— Հեղուշ, դու լողանալ գիտե՞ս, — գետի յեզ-
րին վեր-վեր թռչելով հարցնում եր նրան Նա-
զիկը: — Յես իմ որում գետը չեմ մտել. լողանալ
ել չգիտեմ:

— Իսկ յես գիտեմ:
— Դու արի ինձ հետ ու մի վախենա, յես
քեզ կսովորեցնեմ:


— Զե, յես մենակ վոտքերս կհանեմ, մինչեւ
ծնկներս կմտնեմ ջրի մեջ, և դա բավական ե:

— Վոչ, սիրելիս: Հարկավոր ե սովորել:
— Բժիշկը յեկավ, բժիշկը յեկավ, — տարած-
վում ե աղջկերանց աղաղակը:

Մի պահ աղմուկը դադարում ե, պիոներների
հայացքը գամվում ե նրան:

— Արևի վաննաները և գետում լողանալն
անհրաժեշտ ե առողջության համար. դա ձեզ
միանգամայն կկազդուրե: Լավ յեղանակներին

դուք ամեն որ կլողանաք, բայց, տեսեք, չպետք
ե չափից անցնել... Հինգ բողե արևի վաննա
պետք ե ընդունել, տաս բոսկ լողանալ գետում:
Սա կլինի ձեր նորման,—ասում ե բժիշկը:



Պիոներները լողանալուց հետո փոխում են
ավազի վրա, շուռամուռ են գալիս: Արեն իր ան-
ըսպառ ճառագայթներով գուրզուրում ե նրանց,
շոյում ե նրանց մարմինները: Բայց ի՞նչ յերկար
ե տեսում այս հինգ բողեն: Պիոներների ուշըն
ու միտքը ցածում հօսող ալեծուփ ջրերն են.
աչքերը դցած ալիքներին՝ անհամբեր սպասում
են նշանի...

Մեկ ել հանկարծ, իրար ճրիթով, բոլոր
միանգամից թռչում, ընկնում են գետը...

Յերեխաները չեն կարողանում անջատվել
ջրերից, իսկ տաս բոսկն վաղուց արդեն անցել եւ:

Ալիքների մեջ մի վերջին պտույտ, ջրերի
մի լայն հորձանք, ու պիոներները հագնվում և
ճանապարհվում են դեպի վրանները:

Լողանալուց հետո նրանք այնպես են թեթևա-
ցել, այնպես կայտառ ու զվարթ են զգում
իրենց:

— Գիտեք, ընկերներ, հիմա մենք պետք ե
գնանք կոլխոզիկներին ոգնելու, — ասաց Բուլատը:

— Գիտենք, գիտենք. — այսոր ել, վաղն ել, ես
գեկադում մեր ամբողջ աշխատանքն ենտեղ
պետք ե լինի, — ասաց Հոփիսիկը:

Լսվեց ազգանշանը...

— Տու... տու...

— Գնում ենք, գնում, — աղաղակեցին այս ու
այն կողմից ու ճամբար ընկան:

Ճանապարհը կանաչների ու ծաղիկների մեջ
եր. յերկու կիլոմետրի չափ: Նրանց առաջ բաց-
վեց կոլխոզի ընդարձակ տնտեսությունը:

Ամբողջ ճանապարհին նրանք վոգեորված
ասում, խոսում, յերգում եին:

Վողջույններով և ովիացիաններով նրանք հան-
դիպեցին կոլխոզիկներին,

— Յեկել ենք ոգնելու ձեզ. մեր կողեկտիվը
ձեր տրամադրության տակ ե...

— Նատլավեք արել, — ուրախ բացականչեցին
կոլխոզնիկները, բաց արին պահեստի դռները,
գործիքները հանեցին ու բաժանեցին պիոներ-
ներին:

Վորը յեղան, վորը փոցիս, վորը թոխի, վո-
մանք բահ, զինված գործիքներով ցրվեցին ցան-
քերի մեջ: Մեծ յեռանդով աշխատում եյին. մի
խումբը քաղհան եր անում բանջարանոցում, մի
այլ խումբ խոտերն եր հավաքում դիզում. մի
ուրիշ տեղ բանջարանոցն եյին ջրում, գետնա-
խընձորը բողազ անում. . .

Աշխատանքը կատարվում եր այնքան խնամ-
քով, պիոներներն այնքան սիրով եյին իրար հետ,
վոր գյուղացիք մնացել եյին զարմացած:

— Մաքուր փոցիսեցեք, ինսամքով հավա-
քեցեք:

— Զգուշ քաղհան արեք, տունկերը չվնա-
սեք, — ասում են իրար պիոներները:

Ու այդպես յեռանդով աշխատում եյին նրանք,
մենչե վորոշված ժամը: Ապա գործիքները հանձ-
նելով կոլխոզի վարչությանը՝ ուրախ տրամա-
դրությամբ վերադառնում եյին:

Ճաշեցին:



Յերբ ճաշը վերջացավ, հայտարարվեց մեռյալ
ժամ: Ապա սկսվեցին յերածշտություն, զանազան
խաղեր ու զինվարական վարժություններ:

Ինչպես ծրագրված եր, գեկաղի ընթացքում
ամեն որ նրանք պետք ե աշխատեյին կոլխոզ-
նիկների մոտ:

Յըկըռդ և հաջորդ որերը նրանց հանձնված
եր սիմինդի արտերը թոխի անել:

Գիշերը մի փոքր անձրև եր յեկել, հողը փափ-
կել, ողն ել թարմացել եր:

Պիոներները խումբ-խումբ, ուրախ յերգելով,
թռիչի եյին տալի, պարարտացնում եյին հողը։
Նրանք կարծ ժամանակում ենքան եյին ընտելա-
ցել և ենազես խնամքով եյին կատարում աշխա-
տանքը, վոր կոլխոզնիկները հիացած եյին նրան-
ցից. մի խումբ պիոներներ հենց առաջին որից
իրանց վրա եյին վերցրել կոլխոզնիկների մեջ
անգրադիտությունը վերացնել։ Դասագիրք, տե-
արը, մատիտ առած՝ անետուն շրջում, սովորեց-
նում եյին գրել, կարդալ։

Մի այլ խումբ ել աշխատում եր նրանց
մանկաներում. խնամում եյին յերեխաներին։
Կոլխոզնիկները հրճվանքով նայում եյին ու զար-
մանում. վորքան յեռանդ և ուժ կար այդ մա-
տադ սերնդի մեջ...

Լագերի կյանքում մեծ տեղ ե գրավում նաև
խարույկը, վորի շուրջը կազմակերպվում են
զրույցներ, ինքնալործունեության յերեկոներ։

Յերեկոյան թեյից հետո հերթապահները վա-
ռում են կրակը։ Պիոներները կազմ ու պատրաստ
խմբերով գալիս են խարույկի հրապարակ, բռնում
իրանց տեղերը. սկսվում են սովորական աշխա-
տանքները։

Հաճախ խարույկին ներկա յեն լինում շրջակա
գյուղերից պիոներներն ու կոլխոզնիկները։



Զանազան ազգություններից ու ցեղերից ամեն մեկն իրան լեզվով պատմում ե որվա տպավորություններից, կատարած աշխատանքներից:

— Մեր գյուղի պիոներները միասին, ձեռք ձեռքի տված, ոգնում եյին մեր կոլխոզնիկներին, թե նրանց վար ու ցանքի, թե գաշտային աշխատանքների մեջ... խոսեց գյուղից յեկած Ալին:

— Իսկ մենք շաբաթներով մնում եյինք նրանց հետ. ամենադժվար պայմաններում անդամ հասնում եյինք նրանց ոգնության.—ասաց Դաթիկոն:

— Ես ձմեռ վորոշել եյինք մեր շրջանում չթողնել վոչ մի անզրագետ. անցանք գործի. նույն իսկ պառավ կանայք, ծերունիներ սիրով սովորում եյին... և զարմանալին են եր, վոր նրանք մի ժամանակ մեզանից խորշում, յերես եյին դարձնում, այժմ մեզ հավատով ու սիրով եյին վերաբերվում:

Քննելու ժամը մոտենում ե, բայց նրանք ենքան եյին տարվել, ենքան վառ ապրումներ ունեյին, վոր կարծես զրույցներին վերջ չկար...

Կրակն ել կարծես իր բոցով գուրգուրում եր նրանց:

Զբույցն ընդհատում ե փողի հնչյունը, վորը հրավիրում ե պիոներներին դեպի կայմը. քիչ

հետո ինտերնացիոնալի հնչյունի տակ իջեցվում ե գըոշը, վորից հետո պիոներները հանգիստ ցրվում են վրանները քնելու:

ՌԱԶՄԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մի սիրելի զբաղմունք ել կար լագերում. դա ռազմական վարժություններն եյին:

Որվա վորոշ ժամերին, յերկու հմուտ կարմիր բանակայինների ղեկավարությամբ, պիոներները պարապում եյին այդ աշխատանքներով:

— Վաղը ամբողջ որով պիտի իջնենք ձորը. Ենտեղ ընտրել եմ մի շատ ընդարձակ ու գեղեցիկ տեղ: Մեր չորս խմբակը, առանց իրարխանդարելու, կկատարեն զինանշանի վարժություններ: Վերջն ել կփորձենք հակագաղի դիմակներով.—ասաց նրանց ղեկավարը:

— Յես սիրում եմ հրացանից կրակել, խոսեց Հրանտը:

— Իսկ յես, ընդհակառակը, մի վտաքով չոգած, հրացանը կսեղմեմ կրծքիս: Նշան բռնեն ու կրակելը մեկ կլինի... — իր պայծառ աչքերը հառելով ընկերներին, ասաց Մարգոն:

— Հրացանիս ծայրը մինչև չհենվի մի ծառի, մի թփի, կամ քարի, բան չի գուրս դա. կոներս գողում են. — խոսեց Զիգֆին:

— Դատարկ բան ե. վարժություն ե հարկավոր. պետք ե սովորել:

Հարկավոր չի յերկար ժամանակ նշան բռնել. եղ զեաքում ձեռքերդ կդողան. պետք ե հրացանը ամուր սեղմել կրծքին, աչքերի տեսողությունը վարժեցնել այնպես, վոր նշանին բռնելը և բըլթակի քաշելը կատարվի մի ակնթարթում...

— Վա՞ր դիրքն ե ավելի դժվար. պառկած, չողած, թե կանգնած. — հարցրեց Հրանուշը:

— Դա, ինչպես ասացի, կախված ե վարժություններից: Այ, Անմեղը կանգնած ավելի լավ ե խփում նշանին, քան պառկած, իսկ Մարգոն, ընդհակառակը, չողած...

Ամենագլխավորը, ռազմիկն ինքն իրեն պետք ե ներշնչի, վոր տիրապետում ե զենքին. եղ դիտակցությունը նրա մեջ պետք ե վառ լինի... իսկ յեթե տատանման մեջ ե նա, վախենում ե, վոր չպիտի կարողանա նշանին խփել ի հարկե, ձեռքերն ել կդողան, աչքերն ել կմթնեն:

Պիոներները զրույցից հետո գոհ սրտով անցան իրենց վրանները:

Մյուս որը, առավոտվա թեյից հետո, նրանք անմիջապես գնացին ձորը:

Դա մի գեղեցիկ վայր եր. ցածից խոխոջալով անցնում եր գետը, դիմացը հաղթ կանգնած եր մամռապատ ժայռը, շուրջը կանաչ ծառ ու ծա-

ղիկ, մեջտեղը լայն, ընդարձակ տարածություն։ Պիկ, մեջտեղը լայն, ընդարձակ տարածություն։ կարծես դա հատուկ պատրաստված լիներ գինավարժության համար:

Լսվեց շեփորի ձայնը:


Պիոներները կանգնեցին ու բաժանվեցին չորս խմբի: Նշանակեցին հերթապահները ու անցան դործի:

Եղ վարկանից նրանք լրջացած, ամեն մեկը իր հերթին, սկսեցին կարդ ու կանոն պահպանել: Հերթապահները նշանի տախտակները տեղափորեցին ու սահմանեցին նշանի հեռավորությունը:

Պիոներներին բաժանվեցին թեթև հրացաններ: Ամեն մեկին վորոշեցին յերեքական վամփուշտ՝ մեկը կանգնած, մեկը չողած, մեկը պառկած՝ կրակելու համար: Հերթապահնը մեկ-մեկ աղդակրակելու համար: Հերթապահնը մեկ-մեկ աղդակրակելու համար: Հերթապահնը մեզմեց կրծքին: Անմեղին. նա հրացանը սեղմեց կրծքին:

Յերեք գնդակն ել առան նշանին: — Ուռա... ուռա... — գոռացին այս ու այն կողմից..

Նրանից հետո Զիզին եր. նա մտքումը լավ եր պահել ղեկավարի խրատը՝ յերկար նշան չըլռել: Յերեք գնդակն ել իրար հետեկից դուրս նել: Յերեք գնդակն ել իրար հետեկից դուրս նրա հրացանից: Մեկը բռնել եր նշանին. թռան նրա հրացանից: Մեկը բռնել ել նշանին. նրա ուրախությանը չափ չկար:



Հերթը հասավ հակագաղին։
Պիոներները նույն աշխուժով սկսեցին փող-
ձեր անել. ով յերկար կղիմանա. ով ազատ
շունչ կքաշի դիմակի միջով։
Դիմակները հագած, վազվզում են այս ու
այն կողմը. պառկում են գետին, թռչկոտում։
Յերբ ամեն ինչ վերջացավ, լսվեց ազգանշանի
կոչը։
Արդեն մութն ընկնում եր, վոր նրանք հա-
սան լագեր...

Ա. Բ Շ Ա. Վ Լ

Նրանք վաղուց ի վեր պատրաստվում եյին
ուազմական արշավին. Ծրագիրն արդեն պատ-
րաստ եր:

Պիոներները բաժանվել եյին յերկու բանակի։
Յուրաքանչյուր բանակ առանձնապես մշակել եր
իր հարվածային ծրագիրը։ Հայտարարել եյին
պատերազմական դրություն։ Յերկու բանակ եր
կազմվել՝ մեկը կարմիր նշանի տակ, մյուսը՝ կա-
պույտ. պետք է կովի բռնվեյին իրար դեմ...
Կապույտները պետք է պաշտպանեյին գյուղը և
նրա բարձունքները, իսկ կարմիրները պետք ե
հարձակվեյին ու տիրանային այդ կետերին։

Ամեն մի բանակ իրեն հերթին ընտրել եր
հետախույզներ, սանիտարներ. ուներ հեռախոսի
ցանց, այլեր և անհրաժեշտ պիտույքներ:

Արշավը պիտի սկսվեր վաղ առավոտից: Յեր-
կու բանակն ել եդ յերեկո պատրաստ սպասում
էյին հրամանին...

Բանակներն ունեյին իրենց շտաբը:

Կարմիրների ղեկավարներն ընտրվել եյին՝
բուլատը, Մարգոն ու Հեղուշը: Կապույտներինը՝
Հրանտը, Հոփիսիկը, Ահմեդը:

Լուրջ ու խոհուն եր նրանց դեմքերը: Հեշտ
չեր. ամբողջ պատասխանատվությունը նրանց
վրա յեր ընկնում:

Կարմիր հրամանատար-ղեկավարները ինքնու-
րույնություն եյին տվել պիոներներին. իրանք
դիտողի, քննադատողի դերումն եյին:

Բանակը վոտի վրա յեր: Հետախույզները
անհայտ շառավիղներով արդեն անցել եյին առաջ.
Նրանցից շատերը պիտի հետախուզեյին թշնամու-
թանակը, նրա դիրքերը, ամբությունները, իսկ
մյուս մասը պիտի ուսումնասիրեր ճանապարհ-
ները՝ բանակի գլխավոր ույժին ուղղություն
տալու համար:

Քիչ հետո, առանց ձայն-ծպտուն հանելու,
կարմիրների բանակը շարժվեց առաջ: Ճանա-
պարհը խորխորատների ու ձորերի միջով եր: Թե՛

նրանք առաջուց մշակել եյին, բայց գործնակա-
նում ստիպված եյին շեղումներ անել:

Մի պահ նրանք կանգ առան. առաջները բաց-
վել եր ահուելի անդունդ...

Ա՞ջ շարժվել, թե ձախ, — մտածում եյին նրանք:
Այդ միջոցին հետախույզներից՝ Մարտինն իր
յերկու ընկերների հետ շտապ մոտեցավ ու դի-
մելով հրամանատարին ասաց.

— Թեքվեցեք դեպի ձախ, թագնվեցեք ձո-
րակում: Կապույտներն այս կողմն են դալիս.
թող անցնեն, մենք կհետեւնք նրանց:

Կարմիրներն իսկույն ծովեցին դեպի ձախ,
պահվեցին ձորում:

Կապույտները, չորս կողմը նայելով, անցան
դեպի աջ ու շարունակեցին ձամբան: Նրանք
շտապում եյին՝ վորքան կարելի յե շուտ տեղ
հասնել, վոր լուսաբացին իրանց ձեռքում լիներ
թե գյուղի ամրոցը և թե անառիկ դիրքերը:

Կարմիրներն ել իրանց հերթին աշխատում
եյին կարճ ճանապարհով կտրել, անցնել առաջ,
կովով դուրս քաշել նրանց դիրքերից, գրոհ տալ
ու վերցնել բարձրունքները:

Նրանք բավականին անցել եյին:
Բոլորը սպասում եյին հետախույզներին, վոր
ըստ այնմ հարձակման դիմեն:

Հեռվից յերևաց Մարտինը. Նա հայտնեց թշշ-նամի բանակի դրության մասին ու մի առ մի նկարագրեց նրանց բռնած դիրքերը:

— Յերեք տեղ ե կենտրոնացած նրանց բա-նակը... ամենամեծ ուժը գտնվում է գյուղի արևելյան մասում, յերկրորդը հյուսիս-արևելյան, իսկ յերրորդը հարավ-արևելյան: Բացի այդ՝ գյուղի արևմտյան մասում ունեն շատ փոքր քանակությամբ պահեստի ուժեր: Յես յենթադրում եմ, վոր նրանք մեր հարձակմանը սպասում են արե-վելքից և այդ պատճառով ել բանակի ամենամեծ ուժը կենտրոնացըրել են այդ կողմը:

— Ճիշտ ե նկատում Մարտինը, — ասաց Բու-լատը. — ինչպես գիտեք, այդ տեղերը լեռ-ապա-ռաժներ են. մենք նախ պիտի աշխատենք նրանց ուժերին այդտեղից դուրս քաշել, ապա դիմել հարձակման:

— Դժվար ե նրանց եղ ամրությունից հա-նելը, — ասաց Մարգոն, — ինձ թվում ե, ավելի լավ կլինի, վոր մենք ամբողջ ուժով գրոհ տանք և միանգամից վերցնենք նրանց բռնած դիր-քերը...

— Պետք ե ուրիշ ճանապարհ գտնել. — խո-սեց չեղուշը. — ինչպես Մարտինն ասաց՝ գյուղի

արևմտյան կողմում նրանց ուժը թույլ ե, մենք հենց եղանակից ել կսկսենք:

— Ընդհակառակը, պատերազմական տեխնի-կան պահանջում ե հարվածը հասցնել սրտին. յեթե յերկրորդական դիրքերում մեր ուժերը սպառ-վեն՝ մենք կորած ենք...

— Հարցը շատ լուրջ ե. հարկավոր ե խոր-հըրդակցության հրավիրել և մեր բանակի ղեկա-վար ռազմիկներին ու ըստ այնմ վորոշենք. — ասաց Բուլատը և առավ հեռախոսի փողը:

Մի քանի ըոսեցից ներկա եյին ռազմական կազմի ղեկավարները Բուլատը մի քանի խոսքով պատմեց ստեղծված դրության մասին:

— Յես մի նոր առաջարկ ունեմ, — ասավ Հեղուշը. — մեր բանակը բաժանենք յերեք հավա-սար մասի. առաջին մասը թող մնա թագնված նրանց թիկունքում, յերկրորդ մասը հարձակվի գյուղի վրա արևմուտքից, իսկ յերրորդ մասը, իբրև ոգնական ուժ, պահենք գյուղում:

— Ինձ թվում ե, — ավելացրեց նա, — հենց վոր մենք մտնենք գյուղ, նրանք կաշխատեն շրջապատել մեզ. եղ միջոցում գյուղի շրջանի մեր պահեստի զորքը կդա, կշրջապատի նրանց, իսկ նրանք, յենթագրելով վոր ամբողջ ուժը մեր կողմն ե կենտրոնացած, ողնության կկանչեն կողանց բարձունքի զորքին: Եղ մոմենտին, դա-իրանց բարձունքի

բան մտած, մեր բանակը հեղառւթյամբ կվերցնի
նրանց թողած դիրքերը։ Հենց վոր դիրքն ընկավ
մեր ձեռքը, հաղթությունը մերն եւ։

Հեղուշի տվյալները և նրա յենթագրություն-
ները հմուտ ուազմագիտական ելին։ Բուլատը,
վոր մինչև այդ դեմ եր, ձեռքը բարձրացրեց ու
ասաց։

— Յես համաձայն եմ։

Մարգոն, թեև տատանման մեջ եր, նա յել
միացավ։

Հարցը, մի քանի գործնական ուղղումներով,
անցավ միաձայն։ Բուլատն իսկույն կարգադրեց
բանակը բաժանել յերեք մասի։ I մասի ղեկա-
վարությունը վերցրեց ինքը՝ Բուլատը, II մասինը
հանձնեցին Մարգոյին, III-ը Հեղուշին։

Բուլատն իր բանակի հետ անցավ դեպի
բարձունքները։ Մարգոն իջավ ցած, գետի յեղ-
րով ուղղվեց դեպի գյուղը։ Հեղուշը գնում եր
նրա հետ կրնկին։

Տների կտուրներից տեղ-տեղ ծուխ եր բարձ-
րանում։ Անտառի խորքերից լսվեցին աղաղակներ՝
սկզբներում թույլ, ապա ավելի և ավելի ուժեղ։

— Կարմիրները հարձակվել ելին գյուղի յերեք
կողմերից... յերկրորդ բանակը առաջ եր շարժ-
վում... կապույտները, հանկարծակի յեկած, գլուխ-
ները կորցրել, չգիտեյին ինչ անելին... մնացել ելին



իրանց դիրքերում։ Աշխատում եյին պաշտպահ-
վել, թշնամուն ներս չթողնել։

Բայց կապույտները չեյին կարողանում դի-
մադրել. ստիպված եյին նահանջել թողնել առա-
ջին դիրքերը։

Դա այնպես եր վոգևորել կարմիրներեն, վոր
նրանք ավելի մեծ թափով եյին առաջ անցել։

Մի ուժեղ հարված, և նրանք արդեն գյուղումն
եյին... Յերբորդ մասը ըստ ծրագրի, դեռ թագ-
նրված, սպասում եր։

Կապույտներն իրանց հերթին դիմել եյին
խորամանկության. կարմիրներին ներս եյին առել
գյուղ, յենթագրելով, վոր կը ջապապատեն և բո-
ւրբին միասին գերի կվերցնեն... կատարվում եր
մի գաղտնի մանյովրա։ Ամեն կողմերից նորա-
նոր ուժեր եյին բերվում։ Աշխատում եյին կար-
միրներին առնել իրանց ծուղակի մեջ...

Կարմիրներն, ի հարկե, քնած չեյին. նրանք
անխնա հետապնդում եյին կապույտներին։

Դեռ հայտնի չեր, թե ումն ե լինելու հաղ-
թանակը։

Այս անգամ արդեն կապույտներն եյին առել
կարմիրներին իրանց ողակի մեջ...

Յերբորդ բանակը դուրս եր յեկել իր թագը-
տատեղից ու հարձակվում եր...

Կապույտները շըջապատված եյին... Ներսից
նրանց վրա հարձակվել եր յերկրորդ բանակը,
զրոյից՝ նոր յեկած յերրորդը...

Կապույտները պարտված եյին. նրանց բա-
նակի մի մասը գերի յեր ընկել, մյուս մասը
թաղնվել։

Կարմիր բանակայինները, հիացած պիոններների
կատարած հմուտ, ուզմական աշխատանքից, գո-
վում, քաջալերում եյին նրանց։

— Դուք ձեր յեռանդով ու ջանասիրությամբ
վոչ միայն ուզմական ասպարեզում, այլ մեր
արդյունաբերության զարգացման մեջ ել առաջին
տեղը պետք ե բռնեք։

— Կեցցեն մեր պիոններները։

Ա. Բ Շ Ա. Վ. Ի Յ Հ Ե Տ Ո

Մյուս որը, առավոտյան թեյից հետո, պիո-
ներներն ամբողջ խմբով իշել եյին ձոր. ծառերի
ստվերների տակ, կանաչների ու թփերի մեջ
փռված, զրուցում եյին ուզմական արշավի մասին։

— Ինչումն եր կապույտների սխալը. ինչու
պարտությունը կրեցին նրանք. — հարց տվեց կար-
միրնակային յեկավարը։

Բուլատը ձեռքը բարձրացրեց և իրան հատուկ
հանգիստ տոնով ասաց.



— Գլխավոր սխալը նրանումն եր, վոր իրանց բանակի մեծագույն ույժը կենտրոնացրել ելին գյուղի աևելյան շրջակայքում: Իսկ արևմտյան կողմի անտես ելին արել... նրանք անհեռատես և անկազմակերպ ելին:

— Ճիշտ ե, ճիշտ ե...—լսվեցին ձայներ:

— Յես գտնում եմ մի ուրիշ մեծ սխալ,— ասաց Հեղուշը.— Նրանց հետախույզներն անտակտ ելին. Նրանցից յերկուսը գերի ընկան մեր ձեռքը, մնացածները կորցրին մեր հետքերը:

— Ճիշտ ե... ճիշտ ե:

— Ել ինչ սխալներ եք գտնում, — հարցրեց բանակայինը:

— Այժմ թող մատնանշեն, թե ինչ սխալներ ունեյին կարմիրները...

— Մենք վոչ մի սխալ,— գոռացին այս ու այն կողմից:

— Սպասեցեք: Նախ յես համաձայն չեմ ընկերների հետ, վոր ենքան մեղադրանք բարձեցին մեր գլխին... մի բան պետք է լավ իմանաք, վոր մեր գերն, իբրև պաշտպանվողների, ենքան ել նախանձելի չեր... չգիտեմ ինչու այս բոլորը նկատի չառնվեց, — ասաց կապույտների ղեկավար՝ Հրանչառնվեց: — Տասց կապույտների ղեկավար՝ դուքս յետը... — Ճիշտ ե, կարմիրները հաղթող դուքս յետը կան, բայց նրանք ել արին մեծ սխալներ: Գյուղի կան, բայց նրանք ել արին մեծ սխալներ: Գյուղի կիրքերում նրանք ելին վոգեորգվել, վոր քիչ եր մնում ամբողջապես գերի ընկնեն:

— Մեզ մեղադրում են դանդաղկոտության մեջ, այնինչ նրանց պահեստի զորամասը շատ ուշ ոգնության հասավ: Ինչու իրանք ել չկարող զացան մեր բանակը ամբողջովին գերի վեցցնել. Չե՞ վոր մենք արդեն շրջապատված ելինք, — խոչ Ահմեդը:

— Ճիշտ ե, ճիշտ ե...— լսվեցին բացականական չություններ...

— Վոչ, վոչ... սխալ ե...— գոռացին մյուս ները...

Կարմիր-բանակայինը նայեց պիոներներին և ձեռքը բարձրացրեց:

Իսկույն լռություն տիրեց:

— Ձեր բոլոր ասածների մեջ կա անշուշտ վուրու ճշմարտություն: Պատերազմն առանց սխալ-ների չի լինում: Մեր հետագա ուազմական արշավ-ների ընթացքում այդ բոլոր բացերը չպետք է կրկնվն... այժմ յես ձեզ պիտի տամ մի ուրիշ հարց: Ով ի՞նչ սովորեց, ի՞նչ ոգուտ քաղեց, ի՞նչ փորձառություն ստացավ...

— Մի զարմանալի փոփոխություն զգացի յես իմ մեջ: Եղ լարվածության ընթացքում ուղեղս այնպես արագ եր գործում, միտքս այնքան հեռու յեր թռչում, վոր չեյի կարողանում ինքս ինձ իշխել, — ասավ Հրանտը:


— Յերբ յես քայլում եյի, թվում եր թռչում եյի ողի մեջ. ենքան հուզմունք կար իմ մեջ... — խոսեց Արտոն:

— Իսկ յես ուսումնասիրում եյի հետախույզ-ների բոլոր որենքները, և դա ահազին պաշար տվեց ինձ, — խոսեց Մարտինը:

Պիոներներն ամեն մեկն իրեն հերթին ար-տահայտվում եր. արշավի տպավորություններն ենքան խորն եր ազգել նրանց վրա, վոր վոգե-վորությանը վերջ չկար: Կարմիր բանակային-ները հիացած եյին վոչ ենքան նրանց կատարած

արշավից, այլ այն խորը գիտակցությունից, վոր զգացվում եր պիոներների մեջ:

— Մեր հետագա արշավներն ավելի բազմա-կողմանի կլինեն. մենք կունենանք գաղային հար-ձակումներ. կկատարենք գաղտնի հեղափոխական աշխատանք և կտանք իսկական գնահատականը... հարկավոր ե լուրջ պատրաստվել, լավ ըմբռնել ու յուրացնել ուազմական տեխնիկան և ձեռք բե-րել մեծ փորձառություն...



— Ուռաա... — լի կրծքով աղաղակեցին պիո-ներները:

Մուղիկան նվազեց ուազմական մարշ. նրանք խրոխտ քայլերով շարժվեցին դեպի լագեր:

Мадат Петросян
Пионер
в пятилетке

Կ Ա Ր Մ Ի Ր Ծ Ւ Լ Ե Ր “Ի
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Դեղաբանական ՍերիԱ

Լույս են տեսել

1. Մադաթ Պետրոսյանի—«Պիոները հնգամյակում»
(Պատմվածք)
2. Բուբեն Զարյանի—«Թեյարանի տղան»
(Պատմվածքներ)
3. Մաթեոս Դարբինյանի—«Վուկի թելեր»
(Պատմվածքներ)



9166 6 70 400

12198

582.

